№ 2 Յունվարի 17 (29) 1879 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Յունվարի 17 (29) № 2

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թուին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ՌՈՒՍԵՐԷՆ ՀԱՅԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Ներքին տեսութիւն։ Նամակ Քութայիսից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։ —Արտաքին տեսութիւն։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՔՈՒԹԱՅԻՍԻՑ

—

Յունվարի 10-ին

Մի քանի օր սրանից առաջ այցելեցի այստեղի հայոց եկեղեցին, որի գաւթի վրա արդէն հիմք է դրված նոր ուսումնարանի շինութեան։ Շինութիւնը կը լինի երկու յարկանի և կունենայ նկուղներ։ Ուսումնարանի մի կողմից կը լինի մուտք տղաների համար, միւս կողմից աղջիկների համար։ Ասում են թէ մի քանի հազար րուբլ արդէն հաւաքված է ուսումնարանի կառուցման համար և այստեղի հայ քահանայ, տէր Գաւիթ Եարալեանց, դարձեալ շարունակում է եռանդոտ կերպով հաւաքել նուիրատուութիւններ։

Չը գիտեմ որքան տարի է արդէն որ եկեղեցու գաւթի վրա գոյութիւն ունի հայոց երկսեռ ուսումնարանը, բայց հայոց լեզուն այնու ամենայնիւ շատ չէ տարածված Քութայիսի հայոց հասարակութեան մէջ։ Ցոյս ունենանք որ հայոց նոր ուսումնարանը այդ կողմից աւելի արդիւնաւոր կը հանդիսանայ։ Ես չեմ խօսում այստեղի հայ-կաթոլիկների մասին, որոնց մէջ հայոց լեզուի հետք էլ չէք գտնի և որոնք իրանց հայ չեն համարում, այլ անուանում են իրանց կամ վրացի կամ կաթոլիկ, բայց և հայ-լուսաւորչականների շրջանում մայրենի լեզուն բոլորովին գործածական չէ։ Ուրեմն անհրաժեշտ պահանջ կայ հիմնել մի օրինաւոր երկսեռ հայոց դպրոց, որի օգնութեամբ մայրենի լեզուն կարողանար կրկին տարածվել այստեղի հայերի մէջ։

Վերջին ժամանակները այստեղի բոլոր ազգաբնակութիւնների մէջ մի տեսակ ձգտում է նշմարվում դէպի ուսումը։ Այստեղի հրէաներն էլ, որոնք վերջին տարիները սաստիկ բազմացել են Քութայիսում և որոնց պատկանում է քաղաքիս մի ամբողջ թաղը, նոյնպէս սկսեցին հիմնել դպրոցներ իրանց սինագոգների մօտ, որոնց թիւը կարծեմ երեք է արդէն և չորրորդն էլ նոր է կառուցվում։ Այդ ուսումնարաններից մինը, ինչպէս ինձ պատմեցին, կառավարվում է մի երիտասարդ վարժապետի ձեռքով և այդ ուսումնարանը ընդունել է բոլորովին եւրոպական տարրական դպրոցների դասաւորութեան եղանակը։

Այստեղի Դումայի վերջին ընտրութիւնները դեռ շարունակվում են հասարակութեան մէջ խօսակցութեան առարկայ լինել։ Նոր ընտրված քաղաքագլուխը միայն մի տարով է ընտրված, որովհետև մի տարուց յետոյ լրանում է Դումայի ձայնաւորների ծառայութեան ժամանակամիջոցը։ Ուրեմն մի տարուց յետոյ, երբ կրկին կընտրվեն չորս տարով նոր ձայնաւորներ, ձայնաւորների նոր կազմակերպութիւնը կարող է և չընտրել Ասատիանին։ Եւ դա շատ հնարաւոր բան է, որովհետև իմերէլները իրանց ընտրած պաշտօնեաներից միշտ հրաշքներ են պահանջում։ Իսկ հրաշքներ գործել Քութայիսում շատ դժուար է։ Քաղաքը շատ աղքատ է և մեծ պարտքեր ունի, նրա տարեկան բիւդժէտը շատ աննշան է, մի և նոյն ժամանակ նա եկամուտների շատ աննշան աղբիւրներ ունի։ Քաղաքի մէջ բարեկարգութիւններ անելը շատ դժուար է, կամ աւելի լաւ է ասել աննհարին է, իսկ աւելացնել քաղաքային եկամտի աղբիւրները միջոց չը կայ։ Բացի սորանից անցեալ երեք տարվայ Դումայի և Ուպրավայի գործունէութիւնն էլ ամենապայծառներից չէր, ինչպէս պատմում են։ Ձայնաւորները գրեթէ չէին յաճախում Դումայի նիստերը, անհոգ էին դէպի Ուպրավայի ձեռքում գտնվող մատեանների և կասայի բէվիդիա։ Դումայի մէջ տիրապետում էին անընդհատ ինտրիգաներ։ Իմերէլները աշխատում էին որ Ուպրավայի անդամները իմերէլներ կամ վրացիներ լինէին, այստեղի հայ կաթոլիկները, որոնք թէև սրտով ատում են հայերին և իրանց վրացի են ասում, աշխատում էին սև քուէներ գցել իմերէլներին և վրացիներին և իրանց դաւանակիցներին ընտրել տալ Ուպրավայի անդամներ։ Պատմում են և բազմաթիւ զեղծումների մասին Ուպրավայի մէջ։ Ուպրավայի անդամները երբէք միջոց չունեցան վերաքննել քարտուղարի մատեանները և քաղաքային գանձարանը։ Պատահում էին այսպիսի բաներ. վաճառականներ և մանրավաճառներ որոնք առուտուր անելու համար վկայագրեր պէտք է ստանային, կպցնում էին իրանց խնդիրքների վրա օրէնքով պահանջվող 40 կոպէկանոց դրոշմներ։ Բայց ստացումն գրվում էր Ուպրավայի մէջ ոչ թէ նոյն իսկ դրոշմների վրա, այլ խնդիրքի թղթի վրա, այսպիսով մարկաները ազատ էին մնում։ Ցետոյ երբ ձայնաւորներից կազմված մի յանձնաժողովի կողմից ըէվիզիա կատարվեցաւ, գտան թէ մօտ հազար րուբլու մարկաներ գէլված էին խնդիրքներից... Պարզ է որ դրոշմները անձնական եկամուտի աղբիւր էին դարձել։ Խնդրատուներից պահանջվում էր փող ամեն տեսակ տեղեկութիւնների համար Ուպրավայի մէջ. այս ինչ կամ այն ինչ թղթի թիւը իմանալու համար խնդրատուն փող էր վճարում։ Կասկածում են թէ Ուպրավան, կամ նրա առանձին օրգանները գաղտնի կապակցութիւններ ունէին կապալառուների, քաղաքում առաջին հարկաւորութեան մը թերք ծախողների հետ։

Քաղաքագլուխը, Ուպրավայի անդամները և քարտուղարը միշտ վրացիներ կամ իմերէլներ են եղել և պատկանում էին մեծ մասամբ այստեղի ինտելիգէնցիային։ Կաթոլիկները երբէք չը կարողացան իրանց ներկայացուցիչները Ուպրավայի մէջ ունենալ։

Այստեղի մի ձայնաւոր, որ երբէք Դումայի նիստերը չէր յաճախում և միշտ Թիֆլիսումն էր բնակվում, մասամբ անձնական թշնամութենից դէպի այստեղի Միքայէլեան կալուածական բանկը, մասամբ անձնական հաշիւներից, ինչպէս ասում են, յարուցեց մի անգամ Քութայիսում քաղաքային բանկ հիմնելու միտքը։ Այդ բանկի հիմնական դրամագլուխը պէտք է կազմվէր քաղաքիս դարդակ գետիններ ծախելուց։ Ձայնաւորը իր գործը աջողեցնելու համար դիմեց կաթոլիկների և հրէաների օգնութեանը։ Նա օգուտներն ունէր և ուզում էր նրանցից մի քանիներին անցկացնել Ուպրավայի մէջ, որպէս զի բանկի պրօէկտը անցնի Դումայի մէջ։ Ասում են որ պատուելի ձայնաւորը մեծ պարտքեր ունի և պարտ է մեծ գումարներ հրէաներին և կաթոլիկներին։ Ամենքը գիտէին որ քաղաքային բանկը չի աջողվի, բայց հրէաները և կաթոլիկները պաշտպանում էին այդ պրօէկտը, որովհետև ունէին մի քանի գետիններ քաղաքում, որոնց օրաթախ կը լինէին սաղացնել։

Քաղաքային բանկն էլ չաջողվեցաւ։

Բաւական անմխիթար էր, ուրեմն, Քութայիսի ինքնավարութեան գործունէութիւնը առաջին երեք տարին։ Տեսնենք ինչ կը լինի նրա գործունէութիւնը ապագայում։

Ես դեռ յիշել եմ այդ գործունէութեան ամենախոշոր երևոյթները, անտես առնելով մանր ինտրիգաներ և մանր զեղծումներ։ Մանր զեղծումներից կը յիշեմ, օրինակ, հետեւեալը։ Բազարային մի վերահսկող, օգուտ քաղելով մանրավաճառների միամտութենից և նրանց անփորձութենից օրէնքների մէջ, պահանջում էր նրանցից բոլորովին նոր հնարած հարկեր, օրինակ պատենտ ճարպեայ մոմեր ծախելու իրաւունք ունենալու համար։ Խեղճին քաշում էին Ուպրավա և քարտուղարը նրանից մի քանի րուբլ տուգանք էր առնում ու արձակում։ Երբ Ուպրավայի անդամները այդ իմացան, նրանք պահանջեցին քաղաքագլխից որ բազարային վերահսկողը արձակվի։ Բայց այդ ծառայողը դեռ մինչև այժմ շարունակում է վարել իր պաշտօնը, չը նայելով որ այն ժամանակ քաղաքագլուխը խոստացաւ անդամներին արձակել նրան երկու օրից յետոյ։

Գրիգոր Արծրունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 10 յունվարի

Թէ «Արարատեան ընկերութեան» նպատակը պաշտելի է, վսեմ ու ամենամերձ ամեն մի զգայուն հայի համար, թէ նոքա ամենքը պարտական են օգնութեան ձեռք մեկնել և վերջապէս իրանց ձեռքից եկածը չը խնայել նրա հաստատուն, նպատակին որքան կարելի է յարմարաւոր, կարօտալի շնորհը Հայաստանի բոլոր մթապատ վայրերը ծաւալելուն կարող լինելու համար—դա ակնայայտնի է ամենին։ Եւ այդ քաղցր պարտաճանաչութիւնն էր, որ մեզ բորբոքեց և մեր ձեռքից եկածը չը խնայել ազգաշահ ընկերութեանը։ Այդ պատճառով էր, որ ամսոյս 28-ին Ներսիսեան հին ուսումնարանի դահլիճում յօգուտ յիշեալ «Արարատեան ընկերութեան» տուինք մի ներկայացում «Շուշանիկ» ողբերգութիւնը, որից ստացած ընդհանուր 267 ռուբլի 50 կոպէկից հանելով 131 ռ. 93 կ., ծախսը, մնացած 128 ռ. 57 կ., (պակասորդ 7 ռ. ապառիկ է որ շուտով կը ժողովենք և կը յանձնենք դարձեալ ձեզ) խնդրում ենք խոնարհաբար հասցնել ուր հարկն է և տեղի տալ մեր երկտողին ի լուր ազգայնոց։

Թատրոնասէրների մի խումբ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզանից անկախ պատճառներով «Մշակի» ներկայ համարը հրատարակում ենք միայն կէս թերթի մեծութեամբ։

—

Մեզ խնդրում են յայտնել որ Կենդանիների հովանաւորութեան թիֆլիսի ընկերութեան անդամները հրաւիրվում են ներկայ յունվարի 20-ին, ընկերութեան ընդհանուր ժողովին երեկոյեան ժամը 7-ին, գիւղատնտեսական ընկերութեան բնակարանը։ Լինելու է նախագահի և փոխ-նախագահի ընտրութիւնը և կարդացվելու է հաշիւը ընթացող գործերի։

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են. մեր քահանաները վերջապէս վերադարձան Էջմիածնից. դրանց յանցանքն այն է եղել, որ չեն աշխատում հոգևոր արդիւնքները բազմացնել, և այս պատճառով ստորագրութիւն են առել քահանաներից, որ այսուհետև պաշտպանեն սուրբ Աթոռի շահերը.... Նամակագիրը աւելացնում է, թէ հազար այս տեսակ ստորագրութիւններ ազուլեցոց հարուստ քսակներից մի աւելորդ կոպէկ դուրս տանել կարող չեն։

—

Նոյն տեղից գրում են. մեր քահանաներից մէկի խնդիրքի մէջ գտել էին այսպիսի արտասանութիւն. «ինձանից պահանջում են կոյր հնազանդութիւն, բայց ես այդ անել չեմ կարող»։ Ցիշեալ նախագասութիւնները խեղճ քահանային դատապարտութեան պատճառ են եղել, նրան ասել են։—«Ըշտէ քօսակ միրուքդ կը քանդեմ. ասիկա ինչ բառ է, «կոյր հնազանդութիւն» ընել չեմ կարող. ասիկա այն նորելուկների խօսքն է, որ ֆարմասոնութիւն կընեն կոր։»

—

Ն. ԱԳՈՒԼԻՍԻՑ գրում են. մեր պատգամաւորներին Էջմիածնում չէին ընդունել մեր քահանայի գործի վերաբերութեամբ, այլ անպատուութեամբ ճանապարհ էին դցել։ Նրանց պատասխանել էին, թէ ժողովուրդը իրաւունք չունի իր քահանայի մասին խօսելու. այդ հոգ. իշխանութեան գործն է։ Նամակագիրը աւելացնում է, երբ հոգ. իշխանութիւնը ժողովրդի իրաւունքների դէմ այսպիսի կամայականութիւն է գործ դնում, նրան չէ ճանաչում, ժողովրդին մնում է պատասխանել,—երբ դուք մեր իրաւունքները չէք ճանաչում մեր քահանայի վերաբերութեամբ, այսպիսով մեզ ստիպեցնում էք ասել, թէ մենք էլ ձեր պահանջները չենք ճանաչում։ Դուք մեզանից պահանջում էք այնպիսի տուրքեր (օրինակ, «չնչագրամ») որ ոչ մի տեղում ընդունված չեն։ Երևի, դուք մեզ ճանաչում էք այն ժամանակ, երբ ձեզ փող է պէտք։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի թեմական դպրոցի տեսուչ պ. Ս. Բէգ-Նազարեանի և ուսուցիչ պ. Կ. Էդիլխանեանի մէջ անհամաձայնութիւններ են ծագել։ Պ. Կ. Էդիլխանեանը իրան թոյլ է տուել երրորդ դասատան աշակերտների առաջ տեսչին յիմար և արգէտ անուանել։ Աշակերտները այս անցքի մասին հոգաբարձութեանը տեղեկութիւն են տուել։

Պ. Էդիլխանեանի վարմունքը դատապարտելի է։ Մեր կարծիքով այդպիսի վարմունքից յետոյ այդ ուսուցիչը պէտք է անպատճառ արձակվի պաշտօնից։ Որքան մեզ յայտնի է պ. Բէգ-Նազարեանի տեսչութեան ժամանակ այսպիսի անցք դեռ չէ պատահել։ Մեզ յայտնի է նոյնպէս, որ պ. Ս. Բէգ-Նազարեանը երիտասարդ հոգաբարձուների օգնութեամբ ոտքի վրա կանգնեցրեց Երևանի ընկած թեմական դպրոցը։ Վատ չէր լինի, եթէ քննութեան ժամանակ հոգաբարձուները այս բոլորը ի նկատի առնէին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս 28 դեկտեմբերի

Երբ ձեզ կը գրէի թէ Անգղիոյ ձեռքով Հայաստանի բարեկարգութիւն յուսալն utopie է, գուցէ չատերը չը հաւատային. իսկ թէ սխալած լինէինք, բայց դժբաղդաբար Պատրիարք Սրբազանի պատճառաբանեալ հրաժարականը ցոյց կուտայ թէ չեմք սխալած։ Անշուշտ հեռագիրն հաղորդած է ձեզ թէ Ներսէս Սրբազան կը հրաժարի պատրիարքութենէ։ Պատրիարքի հրաժարականը ազգային մի կարևոր դէպք է։ Պատրիարք Սրբազանը այս անգամ առ ազգն չը մատուցանէր իւր հրաժարականը, այլ կառավարութեան կուտայ։ Այդ հրաժարագիրը աշխարհի առաջ Հայոց ազգի զօրաւոր բողոքն է ապիրատ կառավարութեան մը դէմ։ Պատրիարք Սրբազանը իւր հրաժարագրին մէջ յայտնապէս կասէ թէ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածն գործադրելու նշոյլ մը իսկ չը տեսնուիր, Հայաստանի հարստահարութիւններն կը բազմապատկին, և Բ. Դուռը փոխանակ սոցա դարման տանելու, պատրիարքարանի իրաւունքներն կուզէ յափշտակել. Զէյթունցիներու նկատմամբ ըրած խոստումն չը կատարէր և հայ եպիսկոպոս մը ի բանտի կը պահէ։—

Կառավարութիւնը երբ այս հրաժարագիրն ընդունեց բաւական յուզուեցաւ, նախարարաց խորհուրդն որոշեց չընդունել Պատրիարքի հրաժարականը և մեծ վէզիրն կրօնից պաշտօնեայ Զիվէր-պէյն խրկեց առ Ներսէս Սրբազան աղաչելով որ հրաժարականը ետ առնու։ Պատրիարք Սրբազանը անդրդուելի մնաց իւր որոշման վրայ, և Զիվէր-պէյն հրաժարագիրն հոն թողով մեկնեցաւ։ Անշուշտ կառավարութիւնը կուզէ որ այս խնդիրն մարի. իսկ Ներսէս Սրբազան լաւ գիտնալով որ այլ ևս կառավարութեան դէմ բարոյական ազդու դիմադրութիւն մը ընելու ժամն հասած է պիտի ջանայ որ իւր հրաժարագրի առթիւ Հայաստանի խնդիրն եւրոպական դահլիճներու առջև ներկայանայ, և թերևս այն ժամանակ 61-րդ յօդուածէ արդիւնք մը կարենամք տեսնել։ Արդէն կը խոսուի թէ Կ. Պոլսոյ հայ երիտասարդութիւնը Հայաստանի նկատմամբ հանրագիր մը ստորագրելով երաշխաւոր տէրութեանց դեսպանաց պիտի ներկայացնէ։ Իսկ մենք ապահով կրնամք լինիլ որ Ներսէս Սրբազան Պատրիարք պիտի մնայ, ազգը ներկայ պարագայից առջև չը կրնար թոյլ տալ որ նա հրաժարի։

Ներսէս Սրբազան լաւ խելամուտ եղած է թիւրք կառավարութեան Հայ ազգի նկատմամբ հետևած քաղաքականութեանը. սատակցնել Հայաստանի հարստահարութիւններն և հայ ժողովուրդը գաղթականութեան դատապարտել, և այս նպատակին անարգել հասնելու համար Պատրիարքի իշխանութիւնը տկարացնել, և եկեղեցականաց ազդեցութիւնը ջնջել։ Տաճկաստանի մէջ եկեղեցւոյ հովանուցն ներքև է որ քիչ շատ ազատութեամբ կը խօսիմք և կը գործեմք։ Պատրիարքարանի դարաւոր իրաւունքն է որ եկեղեցականք իւր իրաւասութեան ներքև են, նա կը դատէ և կը պատժէ զանոնք։ Բ. Դուռը միշտ ջանացեր է կորզել այդ իրաւունքը մեր ձեռքերէն, բայց սաստիկ դիմադրութեան հանդիպած է միշտ։ Երբ Միդհատ-փաշա առաջին անգամ մեծ վէզիր եղաւ, հրամայեց պատրիարքարաններու որ քաղաքական գործոց չը միջամտեն և Դուռը թաքուն չը գրեն. միւս պատրիարքներն որ չահ ունէին Բ. Դրան առաջ հաճոյ երևալու պատրաստ էին Միդհատի հրամանացն հնազանդել, միայն մեր Պատրիարքն անսասեց այդ հրամանին և յաղթանակը տարաւ։ Բայց Դուռը իւր դիտաւորութենէն ետ չէ կեցած։ Ահա կը պահանջէ պատրիարքարանէն որ Հայաստանի մի քանի առաջնորդներ հրաժարին իրենց պաշտօնէն, և պատրիարքարանը կը դիմադրէ։ Զէյթունցի Նիկողայոս եպիսկոպոսը ի բանտի է, Ներսէս Սրբազան կը պահանջէ որ պատրիարքարանի յանձնուի նա և չեն յանձներ. սակայն Պատրիարքի հրաժարագրին վրայ կը յուսացուի որ Նիկողայոս եպիսկոպոս այսօր կամ վաղը պատրիարքարան գայ։ Զէյթունի վանուց Սարգիս վարդապետ վանահայրն կարող չը լինելով վանքի տուրքերն վճարել կառավարութիւնը չղթայակապ ի բանտ կը նետէ զնա ինչպէս որ կիմացուի պատրիարքարան հասած տեղեկութիւններէ։

Զեմք գիտեր որ արդեօք տակաւին էջմիածին այնպէս կը հաւատայ թէ օսմանցիք զմեզ հայրական գութով կը խնամեն, սակայն Տաճկաստանի հայոց գլխոյն, որոյ կուրծքն օսմանեան չքանչանով զարդարուած է, ազգու բողոքն պէտք է բաւական լինի ցցնելու թէ թրքաց և հայոց մէջ մահու և կենաց պատերազմը բացուած է. այսուհետև Արևելեան հարցի մէջ Հայկական խնդիրն մեծ տեղ մը պիտի բռնէ. թիւրք կառավարութիւնը կը ջանայ այդ խնդիրն խեղդել, մենք կաչխատեմք վառ և կենդանի պահել։ Վստահ եմք որ այսուհետև էջմիածին մեզ հետ պիտի լինի։

Զեմ գիտեր թէ ալ երկրորդական խնդիրներն կարևորութիւն ունին. Ներսէս Սրբազանի յեւրոպա ընելիք ճանապարհորդութիւնը բաւական վիճաբանութեան նիւթ եղաւ հայ, եւրոպական և թիւրք մամլոյ մէջ։ Զեզ գրած էի արդէն սոյն ճանապարհորդութեան վրայ, երբ «Մշակ» Կ. Պոլիս հասաւ դեռ Պոլսոյ թերթերն բնաւ բան մը չէին գրած այս նիւթին վրայ. սմանք, օտարներն մեծաւ մասամբ, Պատրիարքի առողջութիւնը պատրուակ մը կը համարեն և կը կարծեն որ քաղաքական խնդրոց համար պիտի երթայ յեւրոպա։ Իսկ մեր վերջէն ստացած տեղեկութեանց նայելով Պատրիարք Սրբազանը այդպիսի դիտաւորութիւն մը չունի եղեր։ Արդարև հանգանակութիւն մը եղաւ և 5—6000 բուբլիի չափ գումար մը դոյացաւ, զոր չեմք գիտեր թէ Պատրիարքի յանձնեցին թէ ոչ։ Այդ հանգանակութիւնը հետևեալ պատճառով եղած է։ Պատրիարքն ամիսը 5000 դահեկան ամսական կառնու որոյ 1,500 դահեկանը իւր խորհրդականին տալով, իրեն 3,500 դահեկան կը մնայ, որ կընէ զրեթէ 8 լիրա օսմ. (75 բուբլ.) այսպիսի ոչինչ գումար մինթէ կը բաւէ Հայոց Պատրիարքին, որ անձնական հարստութիւն չունի և բազում ծախուց ենթակայ է։ Ուստի Պատրիարք Սրբազանի օգնութիւն մը անելու դիտաւորութեամբ է որ այդ հանգանակութիւնն ըրին։

Երևսփոխանական ժողովն կը գումարի վաղն, հետաքրքիր կը սպասեմք թէ ինչ պիտի ընէ Պատրիարքի հրաժարականի խնդիրն։ Աղթամարայ վանքէն հեռագիր մը կը ծանուցանէ Շատախու գաւառին քիւրդերն դէպի Տիգրանակերտ, Բաղէշ և Վան կը յառաջանան և կը ծաւալին։ Քիւրդերն Շատախու գաւառը կրակի տալու և Վան քաղաքը կոխելու սպառնալիքներ կանեն։

Ըստ մեզ քիւրդերու այս նոր սպառնալիքը կառավարութեան դրդմամբ մի գործնական պատասխան է Կ. Պոլսոյ հայոց շարժումներու։

Կարնոյ առաջնորդի կողմանէ պատրիարքարան գիր մը հասած է որ կը նկարագրէ Խիզանի գաւառի ժողովուրդի ցաւալի վիճակը։ Գաւառը պաշարուած է քիւրդերէ, տէրութեան պաշտօնեայներն, զօրքերն ամեն չարիք կը գործեն. հաղիւ քանի մը հայեր կարող եղած են փախչել և գալ ի Կարին ու իրենց դառն վիճակն ներկայացնել։ Ժողովուրդը պատրիարքարան հեռագիրներ զրկած և գրեր խրկած է, բայց տեղական կառավարութիւնը հեռագրերն և գրերն վար դրած ու Կ. Պոլիս չէ խրկած. 300 ընտանիք առթի մը կը սպասեն երկրէն ձգել փախչելու։ Վերջապէս խեղճ ժողովուրդը չալով ողբալով պատրիարքարանի գթութիւնը կը հայցէ։

Վանէն ալ մանրամասն նկարագրութիւններ ընող նամակ մը եկած է ի Պատրիարքարան յորում նկարագրուած են 11 օրվայ մէջ եղած սպանութիւնք և աւարառութիւնք։

Բասենու առաջնորդ Տիմոթէոս վարդապետ կը հաղորդէ Կ. Պոլիս թէ կառավարութիւնը դատարանաց առջև բոլորովին կը մերժէ հայոց վկայութիւնն ընդունել։ Առաջնորդ կաղաչէ որ Ս. Պատրիարք հայրը հրամանագիր մը առնէ Դռնէն որ այս զեղծմանց առաջն առնուի և հայոց վկայութիւնն ընդունուի։—Սպասէ, խեղճ Տիմոթէոս վարդապետ, սպասէ։—

Մարաշի կառավարիչն բանտարկեալ Զէյթունցիներն երկար տարիներու բանտարկութեան դատապարտեր է առանց Կ. Պոլսէն հրահանգի սպասելու (!)։

Պոլսոյ հայ թերթի մը Հալէպէն դեկտեմ. 14 թվով ընդունած նամակէ մը հետևեալ տեղեկութիւններն կը քաղեմք։

Տեղական կառավարութիւնը 40 զէյթունցի Հալէպ բերած բանտարկած է։ Տեղւոյս անգղիական հիւպատոսը քննութիւն կընէր. ասոր հետևեցան դաղղիական ու իտալական հիւպատոսք ալ. ասոնց ըրած քննութիւնը Կ. Պոլսոյ մեր Պատրիարքարանին ըրած բողոքին ըստ ամենայնի համաձայն է. ըստ որում մեր այդ խեղճ ազգայինք շատ չարչարուած են. Անգղիական հիւպատոսին թարգմանը այդ Զէյթունցւոց այցելութեան գնաց ի բանտ. երբ մերկ ու բոբիկ չարուեցան առջևը, հարցուց թէ Մարաշէն մինչև ցայն վար ինչ անցքեր անցան իրենց գլխին։ Մէջերներէն Յակոբ անուն մէկը ուրիշ ծեր մարդու մը հետ յառաջ եկան և ըսին։

—Մարաշէն մինչև հոս ութ աւուր մէջ եկանք. երեք անգամ մեզ հաց տուին երեքական սօմուն (ամեն մէկ սօմուն 100 դրամ,) ճանբան երբ մենք մէկը արտաքնոց երթար, հսկող զօրականը նորա վրայ գտնուած ստակը կառնուր, այնպէս որ և ոչ մէկերնուս վրայ ստակ մը չը մնալէն յետոյ հագուստնիս անգամ առին։ Այն թապումօտ մէջերնէս մէկն անյայտ եղաւ, որոյ համար զօրականք կըսեն թէ փախած է։ Իսկ այստեղ 24 հոգի մէկ սենեկի մէջ իրարու վրայ կը պառկինք. 2–3 հոգի ալ հիւանդ կայ. այստեղ օրը մէկ անգամ չոր հաց կուտան 100-ական դրամ (որ խիստ ոչինչ բան է)։

Թարգմանը անտի ննջած սենեակին գնաց, որ մութ, խոնաւ և 25 քառակուսի կանգունի մեծութեամբ է եղեր։

Տասը տարի հետէ դիտուած է, որ Զէյթունը աղքատացուցնելով ցրուել կուզուի և այս կը հաստատուի բուն բանտի տոմարներէն, թէ քանի զէյթունցիք ոչինչ գործի համար առանց դատական վճռոյ ամիսներով բանտարկած են։—

Ահա կը տեսնեմք որ ամեն կողմէ Հայաստան, Կիլիկիա, ամեն ուրեք ուր հայ կայ, կառավարութիւնը ո և է ջանք, դաւ, խարդաւանք չը խնայեր ազգաքացնելու, ցրուելու, ջնջելու այդ հայութիւնը։ Բայց զուր ջանք, անօգուտ վատակ, հայութիւնը տոկաց ամեն հալածանաց, պիտի տոկայ և յաղթականը պիտի տանի և հանդիսատես պիտի լինի վատ իշխանութեան մը կործանմանը։

Աշխատել և համբերել։—

Հայկակ

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿԱԼԿԱԹԱ, 31 դեկտեմբերի։ Գեներալ Բօբէրոս Խօստայից յայտնում է, որ այժմ այնտեղ աւելի հանգիստ է, զլխաւոր կէտերում հնազանդութիւն յայտնեցին։ Բօբէրոս մտադիր է այնտեղ թողնել մի գունդ, երկու հեծելազօր խումբ և երկու լեռնային թընդանօթ. բացի այդ նա մտադիր է այդ ամբոցում երկու ամսուայ պաշար պատրաստել. իսկ ինքը Բօբէրոս կամենում է Կուրում վերադառնալ։

ՓԱՐԻԶ, 31 դեկտ.։ Այսօր գեներալ Գրէվէն պատերազմական մինիստր նշանակվեցաւ, Շալմէլ Լակուրը Բէրլինում Ֆրանսիական դեսպան նշանակվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 դեկա.։ Մեծ իշխանուհի Անաստասիա Միխայլօվնայի հարսանիքի հանդէսը նշանակված է յունվարի 12-ին։ «Правительственный Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ կովկասեան բանակի գլխաւոր հրամանատարի մօտ գտնվող գեներալ Տօլստոյին շնորհված է Սպիտակ Առիւծի նշանը սրերով։ «Голосъ» լրագիրը հաղորդում է որ երէկ Սենատում նայեցին տիկին Գուլակ Արտէմովսկու և Բոգդանովի գործը։ Ակնատը այդ գանգատները առանց հետևանքի թողեց։

Կ. ՊՕԼԻՍ, 2 յունվարի։ Հայոց պատրիարքը հրաժարուեցաւ պաշտօնից,

ՆԻՒ-ԻՕՐԿ, 3 յունվարի։ «New-York Herald» լրագրին հեռագրում են Տաշկենդից, որ Կաուֆմանը Էմիրին հրաւիրել է Տաշկենդ, ուր նրան սպասում են յունվարի 2-ին։ Ասումեն որ անգլիական ոսկին կամաց կամաց սկսում է ազդել Եակուբ-խանի վրա։

ՎԻԵՆՆԱ 6 յունվարի։ «Polit. Corr.» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, որ Բ. Դուռը պահանջում է, որ Դօբրուջայի և արևելեան Բումելիայի կողմից նոր սահմաններ որոշելու մէջ փոփոխութիւններ անեն։ Աշխատում են որ ռուսաց զօրքերը յետ քաշվելուց յետոյ, թիւրքերն էլ նոր երկրներ չը կարողանան գրաւել։ Գործող մասնաժողովը իրան համար վճիռ դրեց. «Կամ Եւրոպայի գեներալ նահանգապետ, կամ պատերազմ։» Դիտաւորութիւն կայ, որ Մեծ պետութիւններին խնդիր ներկայացնեն, որպէս զի Եւրոպական գեներալ նահանգապետ նշանակվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Պետական բանկի 5% տոմակը արժէ առաջին շրջանի 95., բ. 62 կ., երկրորդ 95 բ., երրորդ 94 բ. 97 կ., չորրորդ 94 բ. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 232 բ. 25 կ., երկրորդ 232. բ. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը 92 բ. 75 կ., երկրորդ 92 բ 12 կ., ոսկի 8 բ. 38 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 23, 56 պէնս., ռուսաց 100 բուբլ Գերմանիայի վրա 200, 75 մարկ, Փարիզի վրա 248 ֆր.։ Տրամադրութիւնը թոյլ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Նորին Բարձրութեան Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլօվնայի հարսանիքի հանդէսի առիթով հանդիսաւոր տօնախմբութիւններ են պատրաստվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Պետական բանկի 5% տոմակը արժէ առաջին շրջանի 95 բ. 52 կ. երկրորդ 95 բ., երրորդ 94 բ, 87 կ. չորրորդ 95 բ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 237 բ., երկրկրդ 231 բ. 75 կ., ոսկի 8բ 50 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդօնի վրա արժէ 23 3/8 պէնս։ Տրամադրութիւնը խաղաղ է։

ՎԻԵՆՆԱ, 11/22 յունվարի։ Պատգամաւորների ժողովում աւստրիական Բայխստագի մէջ Բերլինեան դաշնագրի վիճաբանութեան ժամանակ Հօֆէր ասեց որ հարկաւոր է փախչել Ռուսաստանի հետ պատերազմ ունենալուց, բայց որ ժամանակով այդ պատերազմը անհրաժեշտ կը դառնայ։ Այդ պատճառով Աւստրիան պէտք է աշխատի սերտ կապեր կապել Գերմանիայի հետ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի։ Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլօվնայի հարսանիքի հանդէսը Մէկլենբուրգ Շվէրինեան հերցոգի հետ այսօր կատարվեցաւ։ Ս. Պետերբուրգ զարդարված է դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորվեցաւ։ Յունվարի 23-ին նորապսակները ճանապարհ են ընկնելու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի։ Մեծ Իշխանուհի Անաստասիա Միխայլօվնա նշանակված է Խօպերեան գունդի շէֆ։ Հերցոգ Ֆրիդրիխ Մէկլենբուրգ—Շվէրինեան նշանակված է Ղզլարի Գրենէնեան գունդի շէֆ։ Երէկ ձմերային պալատում կար ճաշկերոյթ և պարահանդէս։

Կ. ՊՕԼԻՍ, 13 յունվարի։ Անգլիական շոգենաւ «Ալինա» որ ուղևորվում էր դէպի Անտվերպէն հայոց բեռնաւորված, դիպչելով Բոսֆորի մէջ մի ուրիշ նաւին, ջրի տակ գնաց։ Մարդիկ չը կորան։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 12/23 յունվարի։ Այսօր հասաւ այստեղ Սավֆէտ փաշան, որ մասնաւոր տեսակցութիւն ունեցաւ Կարլ իշխանի հետ։

ՏՐԻԷՍՏ, 12/23 յունվարի։ Այստեղի ծովային իշխանութիւնը աչքի առաջ ունենալով որ Ռուսաստանի մէջ ժանտախտ է յայտնվել, վճռեց բժշկական հետազօտութեանը ենթարկել այն բոլոր առարկաները, որոնք Ռուսաստանից են գալիս։ Սպասում են մինիստրութեան աւելի մանրամասն հրահանգների։

ՓԱՐԻԶ, 14/26 յունվարի։ Պերայից հաղորդում են, որ սուլթանը հիւանդացաւ։

ԿԱԼԿԱԹԱ, 14/26 յունվարի։ Եակուբ-խան գրաւեց հիլզայներին պատկանող ամբոցը և մի քանի գերիներ առաւ։ Այդ պատճառով հիլզայները զէնք բարձրացրին Եակուբ-խանի դէմ։

ԲԷԼԳՐԱԴ, 14/26 յունվարի։ Սկուպշինան միաձայն ընդունեց կառավարութեան առաջարկած օրէնքի նախագիծը սահմանադրութեան այն յօդուածի ջնջելու մասին, որ վերաբերվում է հրէաների իրաւունքների պաշտպանութեանը։

ՐԱԳՈՒԶԱ, 15/28 յունվարի։ Ի նկատի ունենալով Բերլինի դաշնագրի իրագործելը Զերնոգորիայի վերաբերութեամբ մահմեդականները մեծ թիւով սկսում են գաղթել Զագրեբիցայից և Սպուժից դէպի Սկուտարի։

Խմբ. Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Дозволено Цензурою 16 Января 1879 г. Տպարան Ց. Մարտիրոսեանցի Тифлисъ Типографія Мартиросіанца